ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Ա.Պ. ԹԱՐՎԵՐԴՅԱՆ
ՅՈՒ.Գ. ՄԱՐՄԱՐՅԱՆ

ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

Բակալավրի կրթական ծրագրով սովորող ուսանողների համար (վերանայված, լրամշակված)

ԵՐԵՎԱՆ 2011

ՀՏԴ 378 (072)
ԳՄԴ 74.58
Թ 337

Հավանության է արժանացել ՀՊԱՀ գիտական խորհրդի կողմից (25.03. 2011 թ., արձանագրություն 7):

Թ 337

ԹԱՐՎԵՐԴՅԱՆ Ա.Պ.

Կրեդիտային համակարգով ուսումնական գործընթացի կազմակերպում:

Ընթացակարգ / Ա.Պ. Թարվերդյան, Յու.Գ. Մարմարյան, ՀՀ ԿԳՆ, ՀՊԱՀ (վերանայված, լրամշակված).- Եր.: ՀՊԱՀ, 2011. - 40 էջ:

Աշխատանքում ներառված են դրույթներ՝ բակալավրի կրթական ծրագրով սովորող ուսանողների ուսումնական գործընթացը կազմակերպելու համար:

ՀՏԴ 378 (072)
ԳՄԴ 74.58

ISBN 978-9939-54-423-6

© Թարվերդյան Ա.Պ., Մարմարյան Յու.Գ., 2011
© Հայաստանի պետական ագրարային համալսարան, 2011

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ներկա պայմաններում ուսանողներն ապրում են արագ փոփոխվող միջավայրում: Նրանք մրցակցելու են խորը գիտելիքների վրա հիմնվող գլոբալ տնտեսության աշխատաշուկայում: Էապես կարևորվում է այն հանգամանքը, որ բարձրագույն կրթությունը պետք է ուսանողին նախապատրաստի ապագա մասնագիտական արդյունավետ գործունեության համար: Հաշվի առնելով նոր իրողությունը՝ ագրարային համալսարանում ուսանողներին դեպի այդ փոփոխություններն ուղղորդելը դառնում է ժամանակի հրամայականը և հրատապ խնդիր:

Կրթական բարեփոխումների համար նպաստավոր միջավայրի ձևավորումը համակարգային փոփոխությունների գլխավոր պայմաններից է: Համալսարանի բոլոր մակարդակներում ու բոլոր օղակներում բարձրագույն կրթության բարեփոխումների անհրաժեշտությունը ժամանակի թելադրանքն է. դա են պահանջում նաև գործատուները, համաշխարհային աշխատաշուկան, դա ուսանողների ու նրանց ծնողների ցանկությունն է, դա ագրարային համալսարանի ոչ միայն ցանկությունն է, այլև հիմնական խնդիրը:

Բարձրագույն կրթության բարեփոխումների հիմքում ընկած է Բոլոնիայի գործընթացը, որի առանցքային նպատակը Եվրոպական բարձրագույն կրթության տարածքի ձևավորումն է: Ակնհայտ է, որ վերջին տասնամյակներում Եվրոպայում բուռն թափով զարգանում է աշխատուժի գլոբալ շուկան: Բարձրագույն կրթությամբ մասնագետները, ազատորեն տեղաշարժվելով Եվրամիության տարածքում, տարաբնույթ գնահատականների են արժանանում տարբեր գործատուների կողմից: ՈՒստի ներկայումս արդիական է Եվրատարածքում բուհերի շրջանավարտներին տրամադրվող դիպլոմների փոխճանաչումը և տարբեր երկրների կողմից կրթության որակի նկատմամբ փոխվստահության ձևավորումը, որը հնարավոր է իրականացնել միասնական կրթական տարածքի ձևավորմամբ:

Եվրատարածքում շարժունակ են դարձել ոչ միայն բարձրագույն կրթությամբ շրջանավարտները (մասնագետները), այլև բուհերի ուսանողությունն ու պրոֆեսորադասախոսական կազմը: Հետևաբար, անհրաժեշտություն է դարձել նաև միասնական կրթական չափորոշիչներով տարբեր համալսարաններում և երկրներում միևնույն մասնագետների պատրաստումը, որին էապես կարող է նպաստել Եվրոպական բարձրագույն կրթության միասնական տարածքի ձևավորումը:

Հետևաբար, Եվրոպական բարձրագույն կրթության միասնական տարածքի ձևավորումն ի զորու է լինելու մրցունակության առումով արդյունավետորեն արձագանքել համաշխարհային մարտահրավերներին:

Մեր հանրապետությունում Բոլոնիայի գործընթացի ներդրումը ոչ թե պարտադրանք է, այլ ռազմավարական քաղաքականություն, որից ակնկալում ենք դրական արդյունքներ: Բոլոնիայի գործընթացի շնորհիվ

կսերտանա միջբուհական համագործակցությունը ներդաշնակված կրթական ծրագրերի կազմման և ուսանողների շարժունակության ոլորտում, էապես կբարելավվի կրթության որակը: Զուտ մասնագիտական կրթական ծառայություններ մատուցելուց բացի՝ համալսարանները կվերածվեն նաև գիտահետազոտական հաստատությունների: Մյուս կողմից ակնկալիքները մեծ են նաև արտաքին միջավայրից. մեր բարձրագույն կրթությունը չի մեկուսանում միջազգային ինտեգրացիոն գործընթացներից, տրամադրվող դիպլոմները փոխճանաչելի են դառնում Եվրոպական բուհերի համար, ինչը հնարավորություն է տալիս մեր ուսանողներին ու շրջանավարտներին ուսումը շարունակել Եվրոպայում կամ հաղթահարել գործատուի պահանջները Եվրոպական աշխատաշուկայում: Այդ ինտեգրումը նաև հնարավորություն է տալիս իրականացնել փոխանակման ծրագրեր՝ ներմուծել կրթական առաջավոր տեխնոլոգիաներ, որոնք կխթանեն մասնագիտական կրթության որակի բարձրացումը, ինչպես նաև հետապնդել տնտեսական շահեր՝ արտահանելով կրթական ծառայություններ:

Սույն ընթացակարգ հիմնական նպատակը ագրարային համալսարանում կրեդիտային համակարգով ուսումնական գործընթացի կազմակերպումը և ուսանողների գիտելիքների գնահատման համակարգի միասնական չափորոշիչների մշակումն ու կատարելագործումն է:

Այդ նպատակից բխող հիմնական խնդիրներն են՝

- Համաեվրոպական կրեդիտային համակարգի (ECTS) պահանջներին համահունչ միասնական չափորոշիչների սահմանում,
- կրեդիտային համակարգում կիրառվող գործառույթների, ընթացակարգերի, իրականացման հնարավոր մոտեցումների մշակում և լուծում,
- ավանդական կրթական համակարգից ուսուցման կազմակերպման կրեդիտային համակարգին անցնելու հիմնական դրույթների սահմանում,
- կրեդիտային համակարգով ուսուցման պայմաններում ուսանողների գիտելիքների գնահատման բազմագործոնային համակարգի ներդրում:

Կրեդիտային համակարգի ներդրումը համալսարանում մեկնարկած կրթական բարեփոխումների հաջորդ փուլն է՝ կրթության եռաստիճան համակարգի ներդրումից հետո: Ագրարային համալսարանն աստիճանաբար խորացնելու և ընդլայնելու է կրեդիտային համակարգի գործառույթները՝ ուսանողների համար կրթական առավել մրցունակ ծրագրերի և կրթական բարձր արդյունքների հասնելու նպատակով:

1. Կրեդիտային համակարգի հիմնական դրույթները

Սույն կարգը (այսուհետ՝ կարգ) սահմանում է Հայաստանի պետական ագրարային համալսարանում բակալավրի պատրաստման կրթական ծրագրով և կրեդիտային հենքով ուսումնական գործընթացի կազմակերպման միասնական կանոնները:

Կարգը ներառում է ուսումնական գործընթացի կազմակերպման գործառույթները (ընթացակարգերը), գիտելիքների ստուգման և գնահատման համակարգը, ակադեմիական առաջադիմության չափանիշները:

Կարգում տրված են նաև կրեդիտային համակարգում գործածվող առանձին տերմիններ, նկարագրված են համակարգի բնութագրիչները, բնորոշ ընթացակարգերն ու գործառույթները:

Սույն կարգը հիմնվում է «Կրթության մասին» և «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքների, ՀՀ Կառավարության 2005 թ. դեկտեմբերի 27-ի թիվ 2307-ն «ՀՀ բարձրագույն կրթության համակարգում կրեդիտային համակարգի ներդրման մասին» որոշման, ՀՀ կրթության և գիտության նախարարի 2007 թ. հունիսի 9-ի թիվ 588-Ա/Ք հրամանով հաստատված «Բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսումնական գործընթացի կրեդիտային համակարգով կազմակերպման օրինակելի կարգի, «ՈՒսումնական ծրագրերի (պլանների) կրեդիտային հենքով վերակառուցման և կրթական մոդուլներին (առարկաներին) կրեդիտների հատկացման մեթոդական ուղեցույց»-ի և ՀՀ ԿԳՆ համապատասխան հրահանգչական գրությունների վրա:

2. Կրեդիտային համակարգի ընդհանուր նկարագիրը

Համաեվրոպական ECTS (European Credit Transfer System)* կրեդիտային համակարգի հետևյալ սահմանումներն ու դրույթներն ընդունված են Հայաստանի բարձրագույն կրթական համակարգում և գործում են ՀՊԱՀ բակալավրի կրթական ծրագրերում:

Կարողությունը գիտելիքի, ընկալման, ունակությունների և հմտությունների դինամիկ համակցություն է, որի ձևավորումը կրթական ծրագրի հիմնական նպատակն է: Այն կարող է լինել մասնագիտական (առանձնահա-

* ECTS – Կրեդիտների կուտակման և փոխանցման համաեվրոպական համակարգ:

տուկ՝ ուսման տվյալ բնագավառի համար) և ընդհանուր (անկախ բնագավառից):

2.1. Կրթական արդյունքն այն է, ինչ պետք է գիտենա, հասկանա և (կամ) կարողանա անել ուսանողը ուսումնառության ավարտին: Կրթական արդյունքը զուգակցվում է համապատասխան գնահատման չափանիշով, որը հնարավորություն է տալիս դատել դասընթացով սահմանված կրթական արդյունքի ձեռքբերման մասին: Կրթական արդյունքը և գնահատման չափանիշը միասին սահմանում են կրեդիտի շնորհման պահանջները:

2.2. Կրթական (ուսումնական) մոդուլն ուսումնական ծրագրի ամենափոքր, համեմատաբար ինքնուրույն մասն է, որի համար կրեդիտ է տրվում: Կրթական մոդուլի ուսուցման տևողությունը մեկ կիսամյակ է՝ դրանով սահմանված կրթական արդյունքների պարտադիր գնահատմամբ: Կրթական մոդուլին հատկացված կրեդիտները ուսանողին են շնորհվում ամբողջությամբ, այլ ոչ թե առանձին մասերով:

2.3. ECTS կրեդիտը դասընթացը (կրթական մոդուլը) ավարտելու և դրա ելքային արդյունքները ձեռք բերելու համար ուսանողից պահանջվող ժամաքանակով արտահայտված ուսումնական բեռնվածքի չափման պայմանական միավորն է, որը տրվում է ուսանողին նախանշված կրթական արդյունքների ձեռքբերումը դրական գնահատելուց հետո:

2.4. ECTS կրեդիտի կարևորագույն հատկանիշները.

- ECTS կրեդիտով սահմանվող ուսումնական բեռնվածքը ներառում է ուսանողի լսարանային, արտալսարանային և ինքնուրույն իրականացվող բոլոր տեսակի ուսումնական աշխատանք, այդ թվում՝ մասնակցություն դասախոսություններին, սեմինար և գործնական պարապմունքներին, լաբորատոր աշխատանքներին ու պրակտիկաներին, կուրսային և ավարտական աշխատանքների կատարում, քննություններին նախապատրաստում և դրանց հանձնում, անհատական հետազոտություն և այլն,
- կրեդիտը չափում է միայն ուսանողի ուսումնական բեռնվածքը և չի գնահատում դասընթացի կամ կրթական մոդուլի բարդության աստիճանը, մակարդակը կրթական ծրագրում կամ ուսանողի կողմից դրա յուրացման որակը (գնահատականը),
- կրեդիտն ուսանողին տրվում է միայն կրթական մոդուլով նախանշված կրթական արդյունքի գնահատման շեմային չափանիշները բավարարելուց հետո: ՈՒսանողը վաստակում է կրթական մոդուլին հատկացված կրեդիտների լրիվ քանակը՝ քննական արդյունքների (գնահատականների կամ թվանշանների) հետ միասին,
- ECTS կրեդիտը չի չափում դասախոսի ուսումնական գործունեության (դասավանդման) աշխատածավալը: Այն չափում է ուսանողի ուսումնական աշխատանքի (ուսումնառության) ծավալը,

- կրեդիտը չի փոխարինում թվանշաններով ուսանողի գնահատմանը, իսկ ուսանողի վաստակած կրեդիտների քանակը չի որոշվում նրա ստացած թվանշաններով,
- կրեդիտը չի չափում ուսանողի ստացած գիտելիքի որակը, այն չափվում է գնահատականներով: Կրեդիտային և գնահատման համակարգերի միջև փոխադարձ ներգործության որևէ կապ չկա:

2.5. **Կրեդիտային համակարգը** ուսումնական գործընթացի կազմակերպման, ակադեմիական կրեդիտների միջոցով ուսումնառության արդյունքների հաշվառման (արժևորման), կուտակման և փոխանցման համակարգ է, որտեղ համապատասխան որակավորման աստիճանը շնորհվում է կրթական ծրագրով սահմանված կրեդիտների անհրաժեշտ բովանդակության և քանակի ձեռքբերումներից հետո:

2.6. **Կրեդիտների փոխանցման և կուտակման ECTS համակարգը** միասնական համաեվրոպական կրեդիտային համակարգ է, որտեղ ուսանողի լրիվ ուսումնական բեռնվածքը 1 ուստարում գնահատվում է 60 ECTS կրեդիտ: Այն նախատեսված է Եվրոպական բարձրագույն կրթության տարածքում (ԵԲԿՏ) ուսանողների ձեռք բերած կրթական արդյունքների արժևորման, պաշտոնական ճանաչման և բուհից բուհ տեղափոխումը հեշտացնելու համար:

2.7. **Կրեդիտների փոխանցման և կուտակման ECTS համակարգի հատկանիշները.**
- կիսամյակը, ուսումնական տարին կամ ուսումնառության լրիվ ծրագիրը հաջողությամբ ավարտելու համար ուսանողը պետք է վաստակի կրթական ծրագրով սահմանված կրեդիտների անհրաժեշտ քանակը,
- կրեդիտներ հատկացվում են կրթական ծրագրի՝ գնահատման ենթակա բոլոր բաղկացուցիչներին՝ դասընթացներին, կրթական մոդուլներին, պրակտիկաներին, կուրսային և ավարտական աշխատանքներին և այլն,
- կրթական ծրագիրը և դրա առանձին բաղկացուցիչները բնութագրող բոլոր պայմանները՝ ծրագրի նպատակը և ավարտական պահանջները, դասընթացների համառոտագրերը, նախապայմանները և հատկացված կրեդիտները, դասավանդման և գնահատման մեթոդները պետք է նախապես հրապարակվեն (տպագրվեն կամ տեղադրվեն բուհի կայքէջում),
- հավատարմագրված բուհերում կամ կրթական ծրագրերում ստացված կրեդիտները սկզբունքորեն փոխանցելի են բուհերի և կրթական ծրագրերի միջև, եթե դրանց կրթական արդյունքները համարժեք են,
- եթե կրեդիտների փոխանցման գործընթացում ՀՊԱՀ-ն այդ մասին կնքել է ECTS-ի պահանջներին համապատասխանող եռակողմ (ուսանող, առաքող և ընդունող բուհեր) կրթական համաձայնագիր, ապա այն ունի իրավական ուժ:

3. Կրեդիտային համակարգի հիմնական գործառույթները

3.1. Հայաստանի պետական ագրարային համալսարանում իրականացվում են համապատասխան ծրագրային և կազմակերպական վերափոխումներ, որոնց մասշտաբները պայմանավորված են կրեդիտային համակարգի հիմնական գործառույթների ներդրման ամբողջականությամբ:

3.2. Կրեդիտային համակարգի հիմնական գործառույթները երկուսն են.

ա) կրեդիտների փոխանցում, ինչը ենթադրում է ուսումնական ծրագրի բոլոր բաղկացուցիչների աշխատածավալների՝ կրեդիտների օգնությամբ արժևորում և այդ կրեդիտների փոխանցման հնարավորություն,

բ) կրեդիտների կուտակում, ինչը ուսանողին տալիս է դասախոսի, դասընթացների և դրանց յուրացման կիսամյակների ընտրության, ինչպես նաև ուսումնառության ինտենսիվության կարգավորման հնարավորություն և ենթադրում է կրթական կրեդիտների աստիճանական կուտակման գործընթացի առկայություն:

Այս գործառույթները բնութագրվում են մի շարք հատկանիշներով և ուղեկցվում համապատասխան ընթացակարգերով:

3.3. Կրեդիտների փոխանցման գործառույթի հիմնական հատկանիշները.

3.3.1. Մոդուլացված ուսումնական ծրագրեր, որոնց բոլոր բաղդրամասերի (դասընթացներ, կրթական մոդուլներ, կուրսային և ավարտական աշխատանքներ, պրակտիկա և այլն) աշխատածավալներն արտահայտված են ուսանողի լրիվ ուսումնական բեռնվածությունը (լսարանային, արտալսարանային և ինքնուրույն աշխատանք) արտահայտող ECTS կրեդիտներով:

3.3.2. Կրեդիտներով արտահայտված կրթական արդյունքների փոխադարձ ճանաչման և որոշակի թվով կրեդիտների՝ ծրագրից ծրագիր փոխանցման (տեղափոխման) հնարավորություն ՀՊԱՀ-ի ներսում կամ այլ բուհերի համար կրթական ծրագրի պահանջներին համապատասխան:

3.3.3. Կրեդիտային համակարգով ուսումնական պրոցեսի կազմակերպման գործընթացում խիստ կարևորվում է ուսանողների արտալսարանային աշխատանքը: Այն իր հերթին բաղկացած է երկու բաղադրիչներից՝ անհատական (դասախոսի հետ կոնտակտային աշխատանք) և ինքնուրույն աշխատանքից:

ՈՒսանողի հետ ***<u>անհատական աշխատանքը</u>*** լսարանային նյութի կրկնություն չէ, այլ դրա լրացումը: Այն նպատակ ունի օգնել ուսանողին նյութի ընկալումը դյուրացնելու: Անհրաժեշտության դեպքում ուսանողը դիմում է դասախոսին անհատական խորհրդատվություն ստանալու համար, որը պետք է իրականացվի ամբիոնում սահմանված ժամին և սահմանված

լսարանում (ըստ առարկաների և դասախոսների): Միաժամանակ անհատական խորհրդատվությունները չպետք է վերածվեն արդեն իսկ կարդացած դասախոսությունների կրկնության, այլ այն պետք է նվիրվի դասախոսություններին (լաբորատոր-գործնական պարապմունքներին) առնչվող առանցքային հարցերի, դրույթների պարզաբանմանը և բացահայտմանը:

Անհատական աշխատանքն իր մեջ ընդգրկում է նաև ռեֆերատների, կուրսային աշխատանքների (նախագծերի) կատարումը, զեկուցումների, ուսումնահետազոտական աշխատանքների գծով դասախոսի հետ ուսանողի համատեղ արտալսարանային աշխատանքը և այլն:

- Դասախոսն արտալսարանային աշխատանքի վերաբերյալ գնահատականներն արձանագրում է հատուկ ձևաթերթում, կիսամյակի վերջում՝ վերջնական ստուգումից անմիջապես առաջ, որից հետո արդյունքները ներառվում են առարկայի բազմագործոնային գնահատման համակարգի վերջնական ձևաթերթի մեջ (տես հավելվածը):
- Անհատական և ինքնուրույն աշխատանքները, որպես կանոն, կատարվում են գրավոր, անհատական ժամանակացույցի ռեժիմով, երբ ուսանողը կատարում է լրացուցիչ առաջադրանք՝ աշխատելով ամբիոնի կողմից նշանակված ղեկավարի հետ:
- Անհատական և ինքնուրույն աշխատանքների արդյունքները ենթարկվում են հաշվառման, ամփոփվում և արձանագրվում են ամբիոնում:
- ՈՒսանողի արտալսարանային աշխատանքի վերաբերյալ արդյունքները պահպանվում են ամբիոնում ՀՊԱՀ-ի կողմից սահմանված ժամկետներում:

ՈՒսանողի ***<u>ինքնուրույն աշխատանքը</u>*** դասախոսի հետ ոչ կոնտակտային ծանրաբեռնվածությունն է, որը նա կարող է կատարել գրադարանում, տանը, լաբորատորիայում, համակարգչային (ինտերնետային) սրահներում, կամ ՀՊԱՀ-ից դուրս:

- Կիսամյակի ընթացքում յուրաքանչյուր դասընթացից (առարկայից) կարող է հանձնարարվել 1 կամ 2 ինքնուրույն կամ թիմային առաջադրանք (թիմային աշխատանքը կազմակերպելու նպատակով ենթախումբը բաժանվում է 3-5 ուսանողներից բաղկացած խմբերի): Առաջադրանքը կատարելուց հետո այն ներկայացվում է քննարկման, իսկ ուսանողների արդյունքները ներառվում են բազմագործոնային գնահատման համակարգի վերջնական ձևաթերթի մեջ (տես հավելվածը):

3.4. Կրեդիտների կուտակման գործառույթի հիմնական հատկանիշները.

3.4.1. - ՈՒսումնական ծրագիրը բաղկացած է ինչպես պարտադիր, այնպես էլ ընտրովի դասընթացներից, որոնց յուրացման հաջորդականությունը սահմանափակվում է միայն դասընթացների նախապայմաններով,

- ուսանողների կողմից դասընթացների ընտրության և դրանցում ընդգրկվելու համար գրանցման ընթացակարգերի առկայություն,
- ուսանողների ուսումնառության անհատական ծրագրերի առկայություն,

3.4.2. - դասընթացի համար մեկից ավելի ուսումնական հոսքերի առկայության դեպքում ուսանողի կողմից դրանց ընտրության հնարավորություն՝ կախված դասընթացի կայացման ժամանակացույցից կամ դասախոսի նախապատվությունից:

4. ՈՒսանողների ուսումնական բեռնվածությունը (կրթական ծրագրի աշխատածավալը) և կրեդիտների հատկացումը

4.1. ՀՊԱՀ-ում բակալավրի կրթական ծրագրով տարեկան բեռնվածությունը սահմանվում է 60 կրեդիտ, որը համարժեք է 1800 ժամի (60·30=1800).
- տարվա շաբաթների թիվը՝ 52,
- ուսումնական շաբաթների թիվը (ներառյալ 2 քննաշրջանները)՝ 40,
- կիսամյակային ուսումնական շաբաթների թիվը (17 շաբաթ լսարանային + 3 շաբաթ քննաշրջան)՝ 20 շաբաթ,
- ուսանողի օրական ծանրաբեռնվածությունը (6 ժամ լսարանային+3 ժամ անհատական և ինքնուրույն)՝ 9 ժամ,
- ուսանողի շաբաթական ծանրաբեռնվածությունը՝ 45 ժամ,
- մեկ ուսումնական շաբաթին բաժին ընկնող կրեդիտների թիվը (45:30)՝ 1,5 կրեդիտ,
- մեկ կիսամյակին բաժին ընկնող կրեդիտների թիվը (20×1,5 կրեդիտ)՝ 30 կրեդիտ,
- մեկ ուսումնական տարվա կրեդիտների թիվը (2 կիսամյակ × 30)՝ 60 կրեդիտ:

4.2. Մեկ կրեդիտը համարժեք է 30 ժամ ուսումնական բեռնվածության (լսարանային, արտալսարանային՝ ինքնուրույն և անհատական):

4.3. ՈՒսումնական տարվա տևողությունը 40 շաբաթ է, որից 34-ը տրամադրվում է ուսումնական պարապմունքներին, 6-ը՝ կիսամյակային քննություններին: ՈՒսումնական գործընթացն իրականացվում է 2 կիսամյակով (յուրաքանչյուրը՝ 17-ական շաբաթ, բացառությամբ վերջին կիսամյակի):

4.4. ՈՒսանողի շաբաթական ուսումնական լրիվ բեռնվածության (լսարանային և արտալսարանային) առավելագույն չափը սահմանվում է 45 ժամ, որը համարժեք է 1,5 ակադեմիական կրեդիտի (45:30=1,5): Բակալավրի ծրագրում ուսանողի շաբաթական լսարանային բեռնվածությունը կազմում է մինչև 30 ժամ (առանց ֆիզդաստիարակության ժամերի):

4.5. ՀՊԱՀ առկա ուսուցման համակարգի ուսանողը մեկ կիսամյակում պետք է ունենա 30 կրեդիտ ուսումնական բեռնվածության (10 % թույլատրելի շեղումով), մեկ ուսումնական տարում՝ 60 կրեդիտ, իսկ ծրագրի կատարման ավարտին՝ 280 կրեդիտ («Անասնաբուժություն» և «Անասնաբուժական սանիտարական փորձաքննություն» մասնագիտությունների համար՝ 300):

4.6. Դասընթացը մշակող ուսումնական կառույցը (ամբիոնը) այնպես է պլանավորում ուսանողի ուսումնական աշխատանքը, որպեսզի դրա կատարման համար պահանջվող ժամաքանակը համապատասխանի դասընթացին հատկացված կրեդիտների ժամային համարժեքին:

4.7. Առարկային հատկացված կրեդիտների թվի և լսարանային ժամերի միջև կապը միարժեք չէ: Կրեդիտների թիվը կախված է նաև պարապմունքի ձևից (դասախոսություն, գործնական կամ լաբորատոր աշխատանք, սեմինար, կուրսային նախագիծ կամ աշխատանք և այլն):

4.8. Կրթական ծրագրի (առարկայի) առանձին մոդուլներին կրեդիտների հատկացումը ելնում է մոդուլով սահմանված կրթական արդյունքին հասնելու համար ուսանողից պահանջվող աշխատաժամանակի իրատեսական կանխատեսումից:

4.9. Կրեդիտը չափում է միայն ուսանողի ուսումնական բեռնվածքը և չի գնահատում դասընթացի կամ կրթական մոդուլի բարդության աստիճանը, մակարդակը կրթական ծրագրում կամ ուսանողի կողմից դրա յուրացման որակը (գնահատականը):

4.10. Կրեդիտը ուսանողին տրվում է կրթական մոդուլով նախանշված կրթական արդյունքի գնահատման շեմային չափանիշները բավարարելուց հետո (ՀՊԱՀ-ում շեմային սահմանը 20 միավորային համակարգում 8 է, իսկ 100 միավորային համակարգում՝ 40):

4.11. ECTS կրեդիտը չի չափում դասախոսի ուսումնական գործունեության (դասավանդման) աշխատածավալը: Այն չափում է ուսանողի ուսումնական աշխատանքի ծավալը:

4.12. Կրեդիտները հատկացվում են կրթական ծրագրի ուսումնական պլանով սահմանված բոլոր բաղկացուցիչներին՝ դասընթացներին, կրթական մոդուլներին, պրակտիկաներին, կուրսային և ավարտական աշխատանքներին և պետական որակավորման քննություններին հետևյալ չափաքանակներով:

---

* **Ծանոթություն:** Կիսամյակի բեռնվածության թույլատրելի շեղումները սահմանվում են ըստ առանձին մասնագիտությունների՝ գիտական խորհրդի որոշմամբ:

- ՈՒսումնական պրակտիկա՝ 4 կրեդիտ
- Արտադրական պրակտիկա՝ 6 կրեդիտ
- Նախադիպլոմային պրակտիկա՝ 3 կրեդիտ
- Պետական քննություն՝ 4 կրեդիտ
- Դիպլոմային աշխատանքի կատարում և (նախագծի) պաշտպանություն՝ 3 կրեդիտ
- Ընդամենը ՝ 20 կրեդիտ

ՀՊԱՀ գիտական խորհրդի որոշմամբ, ըստ մասնագիտությունների, սահմանվում է ծրագրի պետական ավարտական ատեստավորման ձևը՝

- պետական քննություն (առնվազն երկու համալիր),
- պետական քննության և դիպլոմային աշխատանքի (նախագծի) համակցություն:

Անկախ պետական ավարտական ատեստավորման ձևից՝ երկու պետական քննություն կամ մեկ պետական քննություն և դիպլոմային աշխատանքի (նախագծի) պաշտպանություն, ուսանողին հատկացվում է ընդամենը 7 կրեդիտ (7·30=210 ժամ):

5. Գիտելիքների ստուգման և գնահատման մեթոդաբանությունը և կարգը

5.1. Ընդհանուր դրույթներ.

5.1.1. ՀՊԱՀ-ում ուսանողների գիտելիքների գնահատման համակարգը սահմանում է գնահատման և նշագրման չափանիշներ:

5.1.2. Օգտագործվող գնահատման սանդղակը հնարավորություն է տալիս առանց հաշվարկել կիսամյակի և ուսումնառության ողջ շրջանի ընթացքում ուսանողի վաստակած վարկանիշային միավորը՝ միևնույն ծրագրում ընդգրկված տարբեր ուսումնական բեռնվածություն ունեցող ուսանողների առաջադիմությունները համեմատելու համար:

5.1.3. Օգտագործվող գնահատման սանդղակը հնարավորություն է տալիս հաշվարկել ուսանողի միջին որակական գնահատականը (ՄՈԳ) կիսամյակի և ուսումնառության ցանկացած ժամանակահատվածի համար՝ ուսանողի բացարձակ առաջադիմության չափման նպատակով (տես ակադեմիական տեղեկագիրը):

5.1.4. Գիտելիքի գնահատումները կարող են կատարվել ինչպես թվային կամ տառային նշագրով, այնպես էլ «ստուգված», «չստուգված» սկզբունքով:

5.1.5. ՀՊԱՀ-ում գործում է ուսանողների գիտելիքների կանոնավոր կերպով (պարբերական) ստուգման և գնահատման բազմագործոն համակարգ, որի կիրառման հիմնական նպատակներն են՝

- կիսամյակի ընթացքում գիտելիքների անընդհատ ստուգման և գնահատման օգնությամբ կազմակերպել ուսումնառության համաչափ աշխատանքային գործընթաց և խթանել ուսանողի արտալսարանային աշխատանքը,
- կիսամյակի ընթացքում գիտելիքների անընդհատ ստուգումը տվյալ առարկայի առանձին բաժինների յուրացման մակարդակի ստուգման ձև է, որը դյուրացնում է հմտությունների և կարողությունների ձեռքբերման գործընթացը՝ հնարավորություն ընձեռելով ուսանողին դասընթացը յուրացնել առանձին բաժիններով: Այն նպաստում է ուսանողի կատարողական կարգապահության բարձրացմանը,
- անհատական կամ թիմային առաջադրանքների և ընթացիկ (միջանկյալ) ստուգումների (քննությունների) օգնությամբ բարելավել դասընթացի (առարկայի) արդյունարար գնահատման արժանահավատությունն ու օբյեկտիվությունը՝ գիտելիքների ու կարողությունների գնահատման ընթացքում հաշվի առնելով մի շարք բաղադրիչներ և դրանց կարևորության աստիճանը,
- ուսանողի պատրաստվածության մակարդակին (ստուգարքներին և քննություններին) ներկայացվող պահանջները պետք է ապահովեն գիտելիքների համակողմանի ստուգումը, ապագա մասնագետի մասնագիտական կարողությունների և հմտությունների գնահատումը՝ ըստ մասնագիտության կրթական չափորոշիչի:

5.2. Գիտելիքների գնահատման եղանակները.

5.2.1. Հայաստանի պետական ագրարային համալսարանում ուսանողների գիտելիքների գնահատումն, ըստ մասնագիտության ուսումնական պլանով նախատեսված դասընթացների (մոդուլների) աշխատաժամածավալի, պարապմունքի ձևի, և հաշվի առնելով տվյալ առարկայի կարևորությունը ուսանողի մասնագիտական կարողությունների և հմտությունների ձևավորման մեջ, առարկաներն ըստ գնահատման ձևի բաժանվում են՝
- եզրափակիչ գնահատումով (քննական) առարկաներ,
- առանց եզրափակիչ գնահատման (ստուգարքային) առարկաներ:

5.2.2. Ընթացիկ և եզրափակիչ գնահատմամբ քննություններն անցկացվում են գրավոր: Սահմանված կարգով ամբիոնի և ֆակուլտետի դեկանի կողմից ներկայացված հիմնավորման ու թույլտվության ստացման դեպքում քննությունները կարող են կազմակերպվել գրավոր-բանավոր ձևերի համակցությամբ:

5.2.3. Առանց եզրափակիչ գնահատման (ստուգարքային) առարկաները գնահատվում են կիսամյակի ընթացիկ ստուգումների, լաբորատոր,

գործնական աշխատանքների կատարման և հանձնման, սեմինարների և նման այլ հանձնարարությունների (ռեֆերատ, լրացուցիչ գրականության և գիտական աշխատանքների ուսումնասիրության) կատարողականի ստուգման միջոցով:

5.2.4. Գիտելիքների եզրափակիչ գնահատման ժամանակ ընթացիկ (միջանկյալ) ստուգումների, քննությունների դրական արդյունքների հաշվառումը պարտադիր է: Տվյալ առարկայի ընթացիկ քննությունը(ները) չհանձնած կամ դրանցից որևէ մեկից 8-ից ցածր միավոր հավաքած ուսանողը եզրափակիչ գնահատման (քննության) ժամանակ պարտավոր է սահմանված ձևով հանձնել քննությունն ամբողջությամբ կամ չհանձնած մասից: Միջանկյալ քննությունից (ներից) դրական գնահատական(ներ) ստացած ուսանողին իրավունք է վերապահվում ամփոփիչ քննության ժամանակ վերահանձնել այն առարկայի ողջ ծրագրով:

5.2.5. Քննությունների արդյունքները (ընթացիկ, եզրափակիչ) գնահատվում են 20 միավորային համակարգով (ամբողջական միավորով) և գրանցվում համապատասխան տեղեկագրերում:

5.3. Գիտելիքների գնահատման համակարգը

5.3.1. Գնահատման ընդհանուր դրույթներ.

Ոչինչ չի քայքայում կրթության որակն այնպես, ինչպես գնահատման և գնահատականների վատ համակարգը...

ՈՒսանողների օբյեկտիվ և ճշգրիտ արժանահավատ մեթոդներն ու գնահատականների համակարգը կրեդիտային համակարգով ուսումնական գործընթացի կազմակերպման կարևոր մասն է կազմում: Գնահատումը մի միջոց է, որը նախանշում է ուսանողների առաջադիմության մակարդակը և թե ստացված արդյունքը որքանով է համապատասխանում կրթական նպատակներին:

ՈՒսանողի գնահատումն ավելին է, քան գնահատական նշանակելը: Բացի առաջադիմության որակը նախանշելուց՝ ուսանողի գիտելիքների, հմտությունների ու կարողությունների գնահատումն ապահովում է սովորողի հետ հետադարձ կապը, որպես գործատուի համար որակի ու ուսուցման հաջողության ցուցանիշ:

ՈՒսանողի գնահատման մեթոդները պետք է ներառեն չորս առանձնահատկություն՝

- պետք է լինեն տվյալ գնահատմանը համապատասխան,
- վստահելի,
- օբյեկտիվ,
- ըմբռնելի:

Գնահատման օբյեկտիվությունը վերաբերում է անձնական մոտեցումից դուրս գնահատականի նշանակման կարողությանը: Գնահատողի կանխակալ կարծիքը չպետք է ազդի առաջադիմության գնահատականի վրա:

Գիտելիքների գնահատումը շարունակական գործընթաց է, սակայն այն հաճախ լավ չի ներկայացվում ուսանողին կամ գնահատականները հուսալի չեն լինում: Գնահատումը պետք է ավարտվի տվյալ կիսամյակում առարկայի կամ մոդուլի հիմնական բաժնի ավարտին: Գնահատման մեթոդները պետք է համընկնեն ուսուցման նպատակներին: Օրինակ՝ եթե ուսուցման նպատակը խնդիրներ լուծելու հմտության ձևավորումն է, ապա գնահատման միջոցը պետք է ստուգի այն կարևոր քայլերը, որոնք կիրառվում են տվյալ ոլորտում. խնդրի վերհանում, համապատասխան գրականության ուսումնասիրություն, կիրառելի վարկածի ձևակերպում, վարկածի ստուգում, ստացված արդյունքների հիման վրա որոշման կայացում: Շատ գործատուներ այս գործընթացի կարևոր մաս են համարում մասնագետի կողմից որոշում կայացնելիս պատասխանատվություն կրելու հատկանիշը:

Որակյալ կրթության հաջողությունը էապես կախված է գնահատման և նշագրման հստակ գործող համակարգից, որը պետք է լինի թափանցիկ, արդար, խիստ և արդյունավետ:

Կրեդիտային համակարգում խիստ կարևորվում է ուսանողի առաջադիմության ընթացիկ ստուգումը, որն առարկայի յուրաքանչյուր թեմայի կամ բաժնի յուրացման նվաճումների անընդհատ ստուգում է տվյալ առարկան վարող դասախոսի կողմից:

Գնահատումը պետք է հիմնվի բազմակի չափումների և ոչ թե մեկ դիտարկման վրա: Չափման միջոցը պետք է արտացոլի ուսանողի մտահորիզոնի սահմանները, կարողությունները, խնդիրների դրման և վերլուծության խորությունը: Գնահատման մեթոդները պետք է համապատասխանեն ուսուցման նպատակներին:

Գլոբալացվող հասարակարգում կարևոր է մտապահելու և անգիր սովորելու մեթոդը փոխարինել բարդ խնդիրներ լուծելու համար գիտելիքների ինտեգրումով, այն է՝ վերլուծություն, սինթեզ և գնահատում:

5.3.2. Գիտելիքների գնահատման բազմագործոնային համակարգը.

ՈՒսանողների գիտելիքների գնահատման համակարգը ենթադրում է բազմագործոնային գնահատում: ՈՒսումնառության գործընթացի արդյունքը և ստացած գիտելիքների պաշարը գնահատելիս պետք է հաշվի առնվեն նաև այնպիսի գործոններ (բաղադրիչներ), ինչպիսիք են ուսանողի հաճախումները, լաբորատոր, գործնական, սեմինար պարապմունքներին մասնակցության ակտիվության աստիճանը, արտալսարանային (ինքնուրույն) առաջադրանքների կատարման մակարդակը, ընթացիկ, միջանկյալ և վերջնական (ամփոփիչ) քննությունների արդյունքները: ՈՒստի գիտելիքների գնահատման այս համակարգը կոչվում է բազմագործոնային համակարգ: Ընդ որում՝ յուրաքանչյուր ամբիոնի յուրաքանչյուր առարկան

կարող է ունենալ իր յուրահատուկ գործոնները: Սակայն առարկայի գործոնների ձևավորման կառուցվածքը դասախոսի կողմից կամայականորեն չի սահմանվում: Յուրաքանչյուր գործոնի ընտրությունը և դրա ազդեցության չափը որոշվում է ամբիոնի նիստում, որտեղ քննարկվում և հաստատվում է կոնկրետ առարկայի ուսումնառության վրա ազդող տարբեր գործոնների կարևորությունը (առաջնայնությունը):

ՈՒսումնական պլանով տվյալ առարկային հատկացված (ամրագրված) կրեդիտը որակ է ձեռք բերում (կամ ուսանողը ստանում է) ոչ թե միանվագ, կիսամյակի վերջում ստուգարք կամ քննություն հանձնելիս, այլ աստիճանաբար՝ ամբողջ կիսամյակի ընթացքում: Այս դեպքում ուսանողը, մշտապես գտնվելով ուսումնառության պրոցեսում, ձգտում է կիսամյակի ընթացքում չկորցնել կրեդիտների վաստակման իր հնարավորությունները: Այդ ընթացքում կարևորվում է լսարանային պարապմունքներին հաճախելը, ընթացիկ ստուգումները, քննությունները, ակտիվությունը, արտալսարանային առաջադրանքները և այլն:

ՈՒստի անհրաժեշտ է որոշել թվարկված գործոնների ազդեցության աստիճանը կոնկրետ առարկայի գծով ընդհանուր գնահատականի արժևորման հաշվարկում:

Այդ նպատակով մինչև կիսամյակի սկիզբը յուրաքանչյուր ամբիոն, ըստ կոնկրետ առարկաների, պետք է հաստատի տարբեր գործոնների արժեքն ընդհանուր կառուցվածքում: Կիսամյակի առաջին իսկ օրվանից դասախոսն ուսանողին ներկայացնում և տրամադրում է առարկային ամրագրված կրեդիտների քանակը, գիտելիքների գնահատման գործոնները և դրանցից յուրաքանչյուրի տեսակարար կշիռը՝ արտահայտված տոկոսներով:

ՈՒսանողների գիտելիքների գնահատման բազմագործոնային համակարգում գործոններից յուրաքանչյուրը գնահատվում է 100 միավորային սանդղակով (համակարգով):

Ենթադրենք՝ ուսումնական պլանով տվյալ առարկային հատկացված է 4 կրեդիտ, ինչը համապատասխանում է 100 %-ի: Ամբիոնի նիստում պետք է որոշվի և հատկացվի յուրաքանչյուր գործոնի մասնաբաժինը՝ արտահայտված տոկոսներով (աղ.1, 2, 3):

Աղյուսակ 1

Օրինակ 1

Առարկան՝ հայոց պատմություն (4 կրեդիտ)

Գործոնները	***Կառուցվածքը, %***
Հաճախումներ	15
Ակտիվությունը սեմինարներին	5
Ինքնուրույն աշխատանք	10
Միջանկյալ (ընթացիկ) ստուգում	25
Վերջնական քննություն	45
Ընդամենը	100

Աղյուսակ 2

Օրինակ 2

Առարկան՝ անատոմիա (6 կրեդիտ)

Գործոնները	***Կառուցվածքը, %***
Հաճախումներ	10
Ինքնուրույն աշխատանք	10
Ակտիվությունը դասերին	5
ՈՒսումնական պրակտիկա	5
Ընթացիկ ստուգումներ (կամ միջանկյալ քննություն)	20
Անհատական աշխատանք	5
Վերջնական քննություն	45
Ընդամենը	100

Աղյուսակ 3

Օրինակ 3

Առարկան՝ ֆիզիկա (5 կրեդիտ)

Գործոնները	***Կառուցվածքը, %***
Հաճախումներ	10
Ինքնուրույն աշխատանք	5
Լաբորատոր աշխատանքների կատարում և հանձնում	15
Ընթացիկ ստուգումներ	5
Միջանկյալ քննություն	20
Վերջնական քննություն	45
Ընդամենը	100

Ամբողջ կիսամյակի (տարվա) ընթացքում դասախոսը հաշվառում է յուրաքանչյուր ուսանողի ձեռք բերած արդյունքներն ըստ գործոնների և գրանցում սահմանված ձևաթերթում: Եթե առարկայի համար սահմանված է 2 կամ ավելի միջանկյալ քննություն, ապա անհրաժեշտ է կառուցվածքով դրան հատկացված մասնաբաժինը (%) բաժանել երկու կամ ավելի մասի, որոնց տեսակարար կշիռը պայմանավորվում է առարկայի ողջ ծավալում տվյալ մասնաբաժնի ծավալով և կարևորությամբ (օրինակ՝ եթե ընթացիկ քննություններին հատկացված է 25 % և առարկան ունի 2 ընթացիկ քննություն, ապա 1-ին ընթացիկին կարելի է տալ 10 %, երկրորդին՝ 15 %, կամ հակառակը):

5.3.2.1. Հաճախումներ: Հայաստանի պետական ագրարային համալսարանում ուսանողները պարտադիր պետք է հաճախեն դասերին, ինչը գնահատականի ձևավորման կարևոր բաղադրիչ է: Հաճախումները հաշվառվում են դասախոսությունների, լաբորատոր, գործնական, սեմինար պարապմունքների ժամանակ, ուսումնամեթոդական կենտրոնի կողմից տրամադրված մատյաններում: Կրեդիտային համակարգով կրթության իրականացման պայմաններում հարգելի կամ անհարգելի պատճառներով բացակայությունները չեն տարբերակվում (եթե ռեկտորատում կամ գիտական խորհրդում այլ որոշում չի կայացվում):

Հաճախումների գնահատականը 100 միավորային համակարգում համարժեքացվում է որպես հաճախումների տոկոս, առարկայի ընդհանուր լսարանային ժամերի նկատմամբ, որը գրանցվում է տվյալ ուսանողի գնահատման բազմագործոնային համակարգի սահմանված ձևաթերթում:

Անհարգելի կամ հարգելի լրացված բացակայությունները հաճախումների գնահատման ժամանակ հաշվի չեն առնվում, քանի որ լրացման ողջ գործընթացի հիմնական նպատակը բացակայությունների կանխումն է և անհրաժեշտ գիտելիքի ձեռքբերումը:

Բացակայությունն ուսանողը լրացնում է ռեֆերատի ձևով, որը ներկայացվում է դասախոսին, իսկ լաբորատոր, գործնական պարապմունքները լրացվում են համապատասխան փորձերի կատարումով և հանձնումով: Բացակաների լրացման ուղեգիրն ուսանողն ստանում է դեկանատից և լրացումը սահմանված կարգով կատարելուց հետո ներկայացնում է դեկանատ:

Դասախոսը լրացման տետրն ընդունելիս կատարում է բանավոր հարցում հանձնարարության վերաբերյալ՝ գիտելիքների մակարդակը ճշտելու նպատակով: ՈՒսանողը պարտավոր է բաց թողած դասաժամը (երը) լրացնել բացակայած դասին հաջորդող երկու շաբաթների ընթացքում, իսկ կիսամյակի վերջին՝ նույն շաբաթվա ընթացքում:

Բացակայությունների լրացման տետրերը պահվում են ամբիոնում՝ մինչև տվյալ ուսումնական տարվա ավարտը (կամ տվյալ առարկայի ավարտը), հետագայում ակտավորվում են ամբիոնից կողմից:

Դեկանատը իրավասու է հսկողության տակ պահել ամբիոններում ուսանողների բացակայությունների լրացման ողջ գործընթացը և անհրաժեշտության դեպքում ամբիոնից պահանջելու լրացման տեսքերը:

5.3.2.2. Ակտիվությունը: ՈՒսանողի ակտիվությունը դասախոսի կողմից գնահատվում է 100 միավորային համակարգով՝ կիսամյակի ընթացքում անցկացված լաբորատոր, գործնական, սեմինար պարապմունքների, ինչպես նաև դասախոսությունների ժամանակ՝ ինտերակտիվ մեթոդների կիրառմամբ:

Գնահատման արդյունքները կիսամյակի վերջում՝ ամփոփիչ քննաշրջանից առաջ, արձանագրվում են ամբիոնում՝ հատուկ ձևաթերթի վրա:

Կիսամյակի ընթացքում առանձին մատյանում դասախոսը կատարում է ընթացիկ ակտիվության վերաբերյալ նշումներ (գնահատումներ), որոնց հիման վրա էլ հաշվարկվում է ընթացիկ ակտիվության կիսամյակային ամփոփ գնահատականը:

5.3.2.3. Ինքնուրույն աշխատանք: ՈՒսանողի ինքնուրույն աշխատանքը գնահատում են 100 միավորային համակարգով՝ հիմք ընդունելով կիսամյակի (տարվա) ընթացքում ինքնուրույն աշխատանքի միջին արդյունքները:

Ինքնուրույն աշխատանքի գնահատման արդյունքները կիսամյակի վերջում՝ ամփոփիչ քննաշրջանից առաջ, արձանագրվում են ամբիոնում, հատուկ ձևաթերթի վրա՝ ըստ առանձին ուսանողների:

Կիսամյակի ընթացքում ուսանողին տրվում է հանձնարարություն ինքնուրույն աշխատանքի համար: Առավել արժևորվում է թիմային ինքնուրույն աշխատանքը, որի իրականացման նպատակով ենթախմբի ուսանողներից ձևավորում են 3-5 հոգուց բաղկացած թիմ (կախված ինքնուրույն աշխատանքի ծավալից, ձևից, մեթոդներից և ուսանողների թվաքանակից): Վերջինս ապահովում է նաև ուսանողների թիմային կամ անհատական մրցակցությունը:

Ինքնուրույն աշխատանքը կարող է կրել տարբեր բնույթ (որը որոշում է դասախոսը կամ ամբիոնը).

- ռեֆերատ,
- ուսումնահետազոտական աշխատանք,
- խնդիրներ,
- մշակումներ մասնագիտական գրականությունից,
- թեմատիկ զեկուցումներ,
- շուկայի ուսումնասիրություն և այլն:

Ինքնուրույն աշխատանքի թեմատիկան պետք է բխի տվյալ առարկայի ծրագրից՝ որպես ծրագրային նյութի հավելում և նպաստի ուսանողի հմտությունների ձեռքբերմանը:

Ամբիոնի կողմից սահմանված կարգով աշխատանքը կատարելուց հետո ուսանողը (ուսանողական թիմը) խմբի ուսանողների մասնակցությամբ

հրապարակայնորեն ներկայացնում է դասախոսին (ամբիոնին), որից հետո այն գնահատվում է:

Ինքնուրույն աշխատանքը գնահատվում է մի քանի բաղկացուցիչներով՝

- ինքնուրույն գրավոր աշխատանք,
- ինքնուրույն աշխատանքների ներկայացում կամ պաշտպանություն,
- զեկուցում ուսանողական գիտական ընկերության գիտաժողովներում,
- տեխնիկական միջոցների օգտագործում (ձևավորում),
- նյութի առավել գրագետ ու հետաքրքրական բանավոր ներկայացում,
- վիճակագրական վերլուծություններ,
- օգտագործված գրականություն (տեղեկատվական նյութեր):

Դասախոսն ինքնուրույն աշխատանքի վերջնական գնահատականն ամփոփիչ քննաշրջանի ընթացքում արձանագրում է հատուկ գնահատման ձևաթերթում, որը հանձնվում է դեկանատ:

Ինքնուրույն աշխատանքի գնահատման մասին ուսանողը պետք է տեղեկացվի նախքան ամփոփիչ քննությունը կամ ստուգարքը:

5.3.3. Գնահատման համակարգը.

ՈՒսանողի գիտելիքների մակարդակի և որակի գնահատման համար Հայաստանի պետական ագրարային համալսարանը ղեկավարվում է թվային, տառային նիշերով և ռեյտինգային գնահատման 100 միավորային համակարգով (աղ. 4):

Աղյուսակ 4

Գիտելիքների գնահատման համակարգը

Ռեյտինգային միավորները	Գնահատման սանդղակ		Համապատասխան տառային և թվային գնահատականն ըստ ECTS -ի	
	5 միավորային սանդղակ	20 միավորային սանդղակ	տառային	թվային
95-100 87-94 81-86	5	20	A +	4,0
		19	A	4,0
		18	A –	3,7
75-80 67-74 61-66	4	17	B +	3,3
		15-16	B	3,0
		14	B –	2,7
55-60 46-54 40-45	3	13	C+	2,3
		9-12	C	2,0
		8	C –	1,7
< 40	2	անբավարար	D	0
0		չներկայացած	F	0
≥ 40		ստուգված	S	-
< 40		չստուգված	U	-

Կրեդիտային համակարգում ուսումնառության արդյունքների և գիտելիքների գնահատման համար կիրառվում է տառային գնահատականների 4 միավորային գնահատման սանդղակը՝ A (գերազանց), B (լավ), C (բավարար), D (անբավարար), F (չներկայացած, անավարտ): Որոշ դասընթացներից կամ մոդուլներից ուսանողները գնահատվում են S (ստուգված) և U (չստուգված) սկզբունքով:

ՈՒսանողների գիտելիքների գնահատման առավել տարբերակման նպատակով A, B և C գնահատականներին կարելի է կցել (+) կամ (-) նշաններ, որոնք բարձրացնում կամ իջեցնում են գնահատականը:

«A» գնահատական ստանում է այն ուսանողը, ով դրսևորել է ծրագրային նյութի լիարժեք համակարգված և հիմնավոր գիտելիքներ, անթերի և կազմակերպված կատարել է ծրագրով նախատեսված հանձնարարությունները, յուրացրել է հիմնական և օժանդակ գրականությունը, ինքնու-

ռույն ձեռք է բերել և վերամշակել մասնագիտական գիտելիքների խորացման համար անհրաժեշտ տեղեկատվական աղբյուրները, յուրացրել է առարկայի հասկացության մեխանիզմները, լիարժեք վերաիմաստավորել է առարկաների փոխկապակցությունը և համակարգված գիտելիքների նշանակությունը՝ ապագա աշխատանքի համար, ուսումնաձրագրային նյութերը յուրացնելուց և շարադրելուց հետո ցուցաբերել է ստեղծագործական մոտեցում, տեսական գիտելիքները նույնպես օգտագործել է գործնական խնդիրների լուծման համար և ցուցաբերել է վերլուծական ու քննադատական գնահատման հատկանիշներ և ինքնուրույն աշխատանքի հմտություն:

«B» գնահատական ստանում է այն ուսանողը, ով դրսևորել է ուսումնաձրագրային նյութերի համակարգված գիտելիքներ, կազմակերպված կատարել է ծրագրով նախատեսված հանձնարարությունները, յուրացրել է հիմնական և օժանդակ գրականությունը, տիրապետել է առարկայի հասկացության մեխանիզմներին, լիարժեք վերաիմաստավորել է ինտերառարկաների փոխկապակցվածության նշանակությունը՝ ապագա մասնագիտական գործունեության համար, ցուցաբերել է ստեղծագործական մոտեցում, տեսական գիտելիքները նույնպես օգտագործել է գործնական խնդիրների լուծման համար, ցուցաբերել է վերլուծական ու քննադատական գնահատման հատկանիշներ և ինքնուրույն աշխատանքի հմտություն:

«C» գնահատական ստանում է այն ուսանողը, ով դրսևորել է ուսումնաձրագրային նյութերի լիարժեք գիտելիքներ, ամբողջությամբ կատարել է ծրագրով նախատեսված հանձնարարությունները, տիրապետել է հասկացության մեխանիզմներին, յուրացրել է ծրագրով նախատեսված հիմնական գրականությունը, ցուցաբերել տեսական գիտելիքները պրակտիկայում օգտագործելու հատկություն և անհատական աշխատանքի ունակություն, ձեռք է բերել հետագայում ստացված գիտելիքների ինքնուրույն լրացման և նորացման անհրաժեշտ հմտություններ:

«D» գնահատական ստանում է այն ուսանողը, ով չի դրսևորում այնքան գիտելիքներ, որը բավական լինի հետագա ուսման և ապագա մասնագիտական աշխատանքի համար: ՈՒսանողը կարող է արժանանալ բավարար գնահատականի, եթե հաղթահարի ծրագրով նախատեսված հանձնարարությունները, կարողանա ինքնուրույն լրացնել-նորացնել այս գիտելիքները հետագա ուսման կամ մասնագիտական գործունեության ժամանակ, ցուցաբերի տարրական գիտելիք՝ գործնական խնդիրների լուծման ժամանակ, տեսական գիտելիքների օգտագործման ունակության և ինքնուրույն աշխատանքի նվազագույն հմտություններ:

«S» գնահատականը նշանակում է, որ ուսանողը հասել է առաջադիմության մի մակարդակի, որը դասախոսը բավարար է համարում ուսումնառության տվյալ մակարդակի համար:

«U» գնահատականը նշանակվում է այն ժամանակ, երբ ուսանողը չի բավարարում այդ չափանիշներին:

«S» գնահատականի դեպքում ուսանողը վաստակում է տվյալ դասընթացին հատկացված կրեդիտները, իսկ «U» գնահատականի դեպքում՝ ոչ:

Թե՛ «S», և թե՛ «U» գնահատականների դեպքում ուսանողի օգտին վարկանիշային միավորներ չեն գրանցվում և դրանք չեն օգտագործվում ուսանողի միջին որակական գնահատականը (ՄՈԳ) հաշվարկելիս:

«F» գնահատական նշանակվում է այն ուսանողին, ով շատ անորոշ պատկերացում ունի առարկայի բովանդակության և հիմնական դրույթների մասին, չի կարողանում ինքնուրույն յուրացնել առարկան և պետք է ուսումնական կուրսն անցնի կրկնակի անգամ:

Եթե ուսանողը որևէ առարկայից (դասընթացից) ստացել է «D», «F» կամ «U» գնահատական, նա իրավունք ունի ՀՊԱՀ-ի կողմից սահմանված ժամկետում վերահանձնել այն: Պարտքերի մարման այս շրջանի տրամադրումը նպատակ ունի բավարարից (8) կամ շեմային պահանջներից ցածր առաջադիմություն ունեցող ուսանողներին հնարավորություն տալ ուղղել թերություններն ու բացթողումները և բարձրացնել ուսման առաջադիմությունը բակալավրի կրթական ծրագրի նվազագույն պահանջներին համապատասխան: Սահմանված ժամկետներում բացթողումները չլրացնելու և 8-ից բարձր՝ առնվազն 40 % ռեյտինգային միավոր չստանալու դեպքում ուսանողը ներկայացվում է հեռացման:

ՈՒսման նվազագույն առաջադիմություն ապահովելու համար անհրաժեշտ է հաղթահարել միջին որակական գնահատականի նվազագույն շեմը: Միջին որակական գնահատականի հաշվարկման (որոշման) համար կիրառում են կշռված միջինը՝ որպես կշիռներ կիրառելով որակավորված կրեդիտները:

Սկսած 2008-2009 ուստարվանից՝ ՀՊԱՀ բակալավրիատում իրականացվում է կրեդիտային համակարգով ուսուցում: ՈՒսանողների գիտելիքների գնահատման անհատական տվյալները համապատասխան առարկայից, ըստ բաղադրիչների (գործոնների) և հավաքած միավորների, ամբիոնի կողմից պետք է ներկայացվի դեկանատ՝ տվյալ կիսամյակի քննությունը (ստուգարքը) ըստ ժամանակացույցի ավարտելուց հետո ամփոփիչ քննական տեղեկագրի հետ միասին: Ամբիոնների տվյալների հիման վրա դեկանատում կհաշվարկվեն ուսանողի միջին որակական գնահատականը (ՄՈԳ), վարկանիշային միավորը (ՎՄ) և կգրանցվեն ուսանողի ակադեմիական տեղեկագրում:

Եթե ուսանողը տվյալ առարկայի վերջնական քննությունից (ստուգարքից) հավաքում է 40 և ավելի միավոր (100 միավորային համակարգով), ուսանողին տրվում է ուսումնական պլանով սահմանված կրեդիտը, որը գրանցվում է քննական (ստուգարքային) տեղեկագրում (աղ. 5):

Աղյուսակ 5

Անասնաբուծական մթերքների ապրանքագիտություն և ստանդարտացում

Կրեդիտների թիվը՝ 4

Հ/հ	Ուսանողի ազգանունը, անունը	Բաղադրիչների անվանումը, %						Ուսանողի վերջնական հաշվեկշռված միավորը	Գնահատականը	
		հաճախումներ, 10	ակտիվությունը սեմինարներին (լաբ. գործն. պարապմ.), 5	անհատական, ինքնուրույն աշխատանք, 15	միջանկյալ քննություն, 20	ուսումնական պրակտիկա, 5	վերջնական քննություն, 45		«20 » միավորային համակարգով	տառային համակարգով (A+-ից C-)
1	2	3	4	5	6	7	8	9	10	11
	Ուսանողների ստացած միավորներն ըստ բաղադրիչների									
1	Պետրոսյան Արմեն	90	60	75	80	70	70	74,25	16	B
2										
3										
n										

Դասախոս_____

Ամբիոնի վարիչ /_____/_____
ստորագրությունը ազգանունը

Բազմագործոնային համակարգում յուրաքանչյուր բաղադրիչ գնահատվում է 100 միավոր:

Օրինակ, եթե ուսանողը կիսամյակի ընթացքում յուրաքանչյուր բաղադրիչի 100 միավորից հավաքել է աղյուսակում բերված միավորները, ապա միջին հաշվեկշռված միավորը որոշելու համար այդ միավորը բազմապատկվում է համապատասխան բաղադրիչի տոկոսով, որոշվում են բոլոր բաղադրիչների արտադրյալները և գումարվում, ապա գումարային թիվը բաժանվում է 100-ի և ստացված հաշվեկշռային միավորի միջոցով ըստ գնահատման սանդղակի որոշվում է ուսանողի գնահատականը (աղ. 5):

Օրինակ՝ ա) բաղադրիչ՝ $90 \times 10 = 900$
բ) բաղադրիչ՝ $60 \times 5 = 300$
գ) բաղադրիչ՝ $75 \times 15 = 1125$
դ) բաղադրիչ՝ $80 \times 20 = 1600$
ե) բաղադրիչ՝ $70 \times 5 = 350$
զ) բաղադրիչ՝ $70 \times 45 = 3150$

Ընդամենը՝ $\sum = 7425 : 100 = 74,25$ (հաշվեկշռված միավորը)

Հաշվեկշռված միավորը որոշվում է 0,01 ճշգրտությամբ և կլորացվում սահմանված կարգով: Բաղադրիչների հաշվեկշռված միավորը որոշելուց հետո քննական տեղեկագրում և ուսանողի ստուգման գրքույկում գրանցվում է ուսանողի համապատասխան գնահատականը՝ գնահատման «20» միավորային և տառային համակարգերով:

Եթե ուսանողը որևէ քննական առարկայից վաստակել է 8 (20 միավորային համակարգով) կամ 40 (ռեյտինգային) միավորից ցածր գնահատական կամ ստուգարքային առարկայից ստացել է «չստուգված», ապա այդ առարկայից ուսանողներին կրեդիտներ չեն տրվում:

Ստուգարքով ավարտվող առարկայի կրեդիտն ակադեմիական տեղեկագրում հաշվարկվում է գումարային կրեդիտների որոշման մեջ, սակայն այն չի հաշվարկվում ուսանողի միջին որակական գնահատականի (ՄՈԳ) որոշման ժամանակ:

<u>Դասընթացի (առարկայի) վերահանձնումը</u>

Եթե ուսանողը ստուգարքային և քննական որևէ առարկայից (դասընթացից) ստացել է ոչ անցողիկ ռեյտինգային միավոր (40-ից ցածր), որը համապատասխանում է U կամ D գնահատականներին, ապա նա իրավունք ունի սահմանված ժամկետում վերահանձնել այն:

Չառաջադիմող ուսանողները համարվում են փորձաշրջանի կարգավիճակ ունեցող կամ հեռացման ենթակա ուսանողներ:

Ակադեմիական պարտքերի մարման ժամկետը (փորձաշրջան) սահմանվում է ՀՀ ԿԳ նախարարության կողմից, որի նպատակն է բավարարից ցածր առաջադիմություն ունեցող ուսանողին հնարավորություն տալ այդ շրջանում վերացնել ակադեմիական պարտքերը: Փորձաշրջանի կարգավիճակում գտնվող ուսանողն ի վերջո հեռացվում է համալսարանից, եթե սահ-

մանված ժամկետում (այդ թվում՝ նաև ռեկտորատի կողմից սահմանված ժամկետում) նա չի մարում ունեցած ակադեմիական պարտքերը:

Դրական գնահատականի դեպքում որևէ առարկայի վերահանձնում չի թույլատրվում (բացառությամբ՝ գիտական խորհրդի որոշմամբ սահմանված դեպքերի):

6. ՈՒսանողի ակադեմիական տեղեկագիրը

6.1. ՈՒսանողի առաջադիմության ցուցանիշներն ուսման որոշակի ժամանակահատվածի (կիսամյակ, ուսումնական տարի) կամ ուսումնառության ողջ շրջանի ընթացքում վավերագրելու համար համալսարանի ֆակուլտետների դեկանատները յուրաքանչյուր ուսանողի համար առաջին կիսամյակից սկսած վարում են ակադեմիական տեղեկագիր*, որտեղ յուրաքանչյուր քննաշրջանից հետո, ամբիոններից ներկայացված տեղեկագրերի հիման վրա, գրանցվում են ուսանողի ուսումնասիրած առարկաները (դասընթացները) և կրթական մոդելները, դրանցից վաստակած կրեդիտները և ստացած գնահատականները: Ակադեմիական տեղեկագիրն արտացոլում է ուսանողի կատարած ուսումնական աշխատանքների ծավալը և կրթական ձեռքբերումների որակը:

6.2. ՈՒսանողի վաստակած կրեդիտները վավերագրվում և կուտակվում են նրա ակադեմիական տեղեկագրում և ուժի մեջ մնում նրա ուսումնառության ողջ ընթացքում՝ անկախ ուսումնառության ընդհատումից կամ տվյալ ուսումնական ծրագրի (մասնագիտության) հետագա հնարավոր փոփոխություններից:

6.3. ՈՒսանողի ակադեմիական տեղեկագրում կիսամյակային արդյունքներից հետո նշվում են տվյալ կիսամյակի և մինչև տվյալ ժամանակահատվածն ուսանողի առաջադիմությունն ամբողջացնող ամփոփիչ տվյալները, որոնք ներառում են հետևյալ չորս ցուցանիշները՝

- գումարային կրեդիտների քանակը (Կ),
- գնահատված կրեդիտների քանակը (ԳԿ),
- վարկանիշային միավորը (ՎՄ),
- միջին որակական գնահատականը (ՄՈԳ):

Գումարային կրեդիտը (Կ) ուսանողի վաստակած կրեդիտների գումարն է:

Գնահատված կրեդիտը (ԳԿ) գումարային կրեդիտների այն մասն է, որը ուսանողը ստացել է քննական առարկաներից (գնահատված 20 միավորային սանդղակով և A, B կամ C տառերով):

Վարկանիշային միավորը (ՎՄ) բոլոր քննական առարկաներից (մոդուլներից) վաստակած կրեդիտների և դրանց համապատասխանող

* Ակադեմիական տեղեկագրի օրինակը կցվում է:

գնահատականների արտադրյալների գումարն է (20 միավորային համակարգով): Օրինակ՝ եթե ուսանողը տվյալ կիսամյակի որևէ քննական առարկայից, որի կրեդիտների թիվը 4 է և ստացել է 15 գնահատական, ապա այդ առարկայի վարկանիշային միավորը հավասար է՝ 4·15=60, որն ուսանողը վաստակել է 80 հնարավորից (4 · 20 = 80) :

ՈՒսանողի ընդհանուր վարկանիշային միավորը (ՎՄ) որոշելիս ներառում են բոլոր քննական առարկաների վարկանիշային միավորները:

Միջին որակական գնահատականը (ՄՈԳ) կրեդիտներով կշռված գնահատականների միջինն է, որը հաշվարկում են վարկանիշային միավորների գումարը գնահատված (քննությունով ավարտված) առարկաների կրեդիտների գումարի վրա բաժանելով (արդյունքը կլորացվում է 0,01-ի ճշտությամբ).

ՄՈԳ = ՎՄ/ԳԿ :

Օրինակ՝ եթե տվյալ կիսամյակի արդյունքում ուսանողը բոլոր քննական առարկաներից վաստակել է 180 վարկանիշային միավոր, իսկ գումարային կրեդիտների թիվը կազմել է 16, ապա միջին որակական գնահատականը՝ ՄՈԳ= 180/16=11,50:

Այս ցուցանիշը հնարավորություն է ընձեռում նույն քանակությամբ կրեդիտներ ստացած (կուտակած) ուսանողներին տարբերակել ըստ առաջադիմության: ՈՒսանողից պահանջվում է առնվազն 40 (ռեյտինգային) կամ 8 (20 միավորային համակարգով) նվազագույն շեմային ամփոփիչ միջին որակական գնահատական՝ բավարար առաջադիմություն ունենալու համար:

Դեկանատում նշված 4 մեծությունները (Կ, ԳԿ, ՎՄ, ՄՈԳ) որոշելուց հետո ուսանողի ակադեմիական տեղեկագրում գրանցվում են կիսամյակային և տվյալ շրջանի համար հաշվարկված ցուցանիշները:

7. Ամբիոնի գործառույթները

- Հաստատված ուսումնական պլանների համաձայն՝ ամբիոնը յուրաքանչյուր առարկայի ծրագրին համապատասխան կազմում է լսարանային ժամերի (դասախոսություն, լաբորատոր, գործնական, սեմինար) թեմատիկ և օրացուցային պլանները, որը հաստատվում է ամբիոնի նիստում:
- Առարկայի դասավանդումն սկսելուց 1-2 շաբաթ առաջ սահմանված կարգով քննարկում և հաստատում է տվյալ առարկայի գնահատման բազմագործոնային համակարգը՝ յուրաքանչյուր գործոնի մասնաբաժնով: Հաստատված բազմագործոնային համակարգը պարտադիր է նույն առարկան պարապող ամբիոնի բոլոր դասախոսների համար:

Եթե նույն ամբիոնում դասավանդվում են տարբեր առարկաներ, ապա առարկայի գնահատման գործոնների թիվը և դրանց մասնաբաժինները կարող են լինել տարբեր՝ ելնելով առարկայի առանձնահատկություններից և խնդիրներից:

Ամբիոնը իրավասու է հաջորդ ուսումնական տարում վերանայել առարկայի (ների) գործոնների կառուցվածքը:

Դասախոսը պարտավոր է առարկան սկսելու կիսամյակի առաջին 1-2 շաբաթներում ուսանողներին տրամադրել առարկայի (մոդուլի) համառոտ ծրագիրը, գնահատման գործոնները և դրանց մասնաբաժինները, ինքնուրույն աշխատանքի հանձնարարականները և անհրաժեշտ ուղեցույցները, իսկ քննությունների ու ստուգարքների, ինչպես նաև բազմագործոնային համակարգով գնահատված տեղեկագրերը սահմանված կարգով և սահմանված ժամկետներում ներկայացնել համապատասխան դեկանատ:

8. ՈՒսանողի իրավունքները և պարտականությունները

8.1. ՈՒսանողը պարտավոր է՝

- ծանոթանալ կրեդիտային համակարգով ուսուցման սույն կարգին և խստորեն կատարել դրա պահանջները,
- կատարել ուսումնական դասընթացների (առարկաների), մոդուլների, ստուգարքների և քննությունների սահմանված պահանջները,
- կանոնավոր հաճախել ուսումնական պլանով սահմանված բոլոր դասընթացներին:

8.2. ՈՒսանողն իրավունք ունի՝

- ընտրել տվյալ մասնագիտության (մասնագիտացման) ուսուցման համար առաջադրվող կամընտրական առարկաներ (մոդուլներ),
- սահմանված կարգով մասնակցել միջբուհական փոխանակման կամ ակադեմիական շարժունության ծրագրերի մրցույթին՝ ուսումնառության որոշակի շրջան (կիսամյակ, ուստարի) ուսումնառելու այլ բուհում (ներառյալ օտարերկրյա),
- փոխադրվել մեկ այլ բուհ՝ համաձայն ՀՀ Կառավարության (կամ լիազորված մարմնի) սահմանված կարգի,
- սահմանված կարգով դիմել և ստանալ իր ակադեմիական տեղեկագիրը՝ ավարտած ծրագրի կամ տվյալ ժամանակահատվածի համար,
- բակալավրի ավարտական փաստաթղթի (դիպլոմի) հետ միասին ստանալ ՀՀ Կառավարության որոշմամբ հաստատված նմուշի դիպլոմի հավելված՝ հայերեն և անգլերեն լեզուներով:

Գրականություն

1. Բարձրագույն և հետբուհական կրթության մասին ՀՀ օրենքը:
2. Բուդաղյան Ա. և ուրիշ. Բուհում ուսումնական գործընթացի կրեդիտային համակարգով կազմակերպման օրինակելի կարգ. - Եր., 2007:
3. Երիցյան Ս., Ճուղուրյան Ա. 100 հարց և պատասխան Բոլոնիայի գործընթացի մասին. - Եր., 2007:
4. Մարմարյան Յու., Գլեն Շին և ուրիշ. Բոլոնիայի գործընթաց. Բարեփոխումներ և ռազմավարություն. - Եր., 2007:
5. «ՀՀ բարձրագույն կրթության համակարգում կրեդիտային համակարգի ներդրման մասին» ՀՀ Կառավարության 2005 թ. դեկտեմբերի 22-ի № 2307-ն որոշումը. - Եր., 2005:
6. Աղգաշյան Ռ., Բուդաղյան Ա. Կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույց և դասընթացների տեղեկագիրք. - Եր. ՀՊՃՀ, 2006:
7. Կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույց և դասընթացների տեղեկագիր. - Եր.: ԵՊՀ, 2009:
8. Правила кредитной системы обучения. Утверждено приказом Министерства образования и науки Республики Казахстан. - 2003.

ՀԱՎԵԼՎԱԾ

Հավելված 1

Հավելված 2

Հայաստանի պետական ագրարային համալսարան
Գիտելիքների գնահատման համակարգը

Ռեյտինգային միավորները	*Գնահատման սանդղակ*		*Համապատասխան տառային և թվային գնահատականն ըստ ECTS -ի*	
	5 միավորային սանդղակ	*20 միավորային սանդղակ*	*տառային*	*թվային*
95-100	*5*	*20*	*A +*	*4,0*
87-94		*19*	*A*	*4,0*
81-86		*18*	*A –*	*3,7*
75-80	*4*	*17*	*B +*	*3,3*
67-74		*15-16*	*B*	*3,0*
61-66		*14*	*B –*	*2,7*
55-60	*3*	*13*	*C+*	*2,3*
46-54		*9-12*	*C*	*2,0*
40-45		*8*	*C –*	*1,7*
< 40	*2*	*անբավարար*	*D*	*0*
0		*չներկայացած*	*F*	*0*
≥ 40		*ստուգված*	*S*	*-*
< 40		*չստուգված*	*U*	*-*

Հավելված 3

Հայաստանի պետական ագրարային համալսարան
Անասնաբուծական մթերքների ապրանքագիտություն և ստանդարտացում
Կրեդիտների թիվը՝ 4

	ՈՒսանողի ազգանունը, անունը	***Բաղադրիչների անվանումը և %-ը***						***ՈՒսանողի վերջնական հաշվեկշռված միավորը***	***Գնահատականը***	
		հաճախումները, 10	***ակտիվությունը սեմինարների (լաբ. գործն. պարապմ.), 5***	***անհատական, խմբային դասընթացներ, 15***	***միջանկյալ քննություն, 20***	***ուսումնական նպատակներ, 5***	***ամփոփիչ քննություն (ստուգարք) ≥40 (առավելագույն՝ 45)***		***«20» միավորային համակարգով***	***ստատուսային գնահատականը***
1	***2***	***3***	***4***	***5***	***6***	***7***	***8***	***9***	***10***	***11***
	ՈՒսանողների ստացած միավորներն ըստ բաղադրիչների									
1	Պետրոսյան Արմեն	90	60	75	80	70	70	74,25	16	B
2										
3										
n										

Տվյալ օրինակում ուսանողի հաշվեկշռված միավորը կազմել է 74,25, որը համապատասխանում է 20 միավորային համակարգի 15-16 կամ տառային գնահատման «B»-ին:

Դասախոս _____

Ամբիոնի վարիչ /_____/ _____
ստորագրությունը ազգանունը

Ծանոթություն: Եթե ուսանողը տվյալ առարկայի վերջնական քննությունից (ստուգարք) հավաքում է 40 և ավելի միավոր, ուսանողին հատկացվում է ուսումնական պլանով սահմանված կրեդիտ քննական (ստուգարքային) տեղեկագրում:

Հավելված 4

Հայաստանի պետական ագրարային համալսարան
Առկա, հեռակա ուսուցում (ընդգծել)
Քննական ամփոփիչ տեղեկագիր №
201..../ 201.... ուսումնական տարվա _____ կիսամյակ

Ֆակուլտետը _____
Մասնագիտությունը _____ կուրսը _____ խումբը_____
Առարկա _____ կրեդիտների թիվը _____
Դասախոսի (ների) ազգանունը, անունը _____
Ամբիոնը _____

Հ/հ	Ուսանողի ազգանունը, անունը, հայրանունը	Ստացած միավորները	Գնահատականը	Գնահատման բաղադրիչները (%) և դրանց փաստացի միավորը 100 միավորային համակարգում*										Բազմամյա դիտարկումների հիման վրա ստացված միավորների գումարը 100 միավորային համակարգում	20 միավորով գնահատականը		Դասընթացի գնահատականը (գրել) կուրսային
				դասախոսություն	գործնական	1-ին միջանկյալ ստուգում	2-րդ միջանկյալ ստուգում	ընթացիկ գնահատման արդյունքներ	ոչ ավանդական			ամփոփիչ քննություն			միավորը	տառային գնահատականը (A÷C)	
												ներգրավի դեպքում	գրավոր				
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18

- Ամփոփիչ քննության ներկայացած ուսանողների թիվը _____
- Ստացած գնահատականների թիվը՝ 18-20
  14-17
  8-13
  0-7

- Չներկայացած ուսանողների թիվը _____
- Չթույլատրված ուսանողների թիվը _____

ա) գրանցվում են տվյալ առարկայի համար սահմանված և հաստատված գործոնները
* բ) գործոնները գնահատվում են 100 միավորային համակարգով՝ բացի «20» միավորայինից

Դեկան _____ Ամբիոնի վարիչ _____

Հավելված 5

Հայաստանի պետական ագրարային համալսարան
Առկա, հեռակա ուսուցում (ընդգծել)
Ստուգարքային ամփոփիչ տեղեկագիր №
201... / 201... ուսումնական տարվա _____ կիսամյակ

Ֆակուլտետը _____
Մասնագիտությունը _____ կուրսը _____
Առարկա _____ կրեդիտների թիվը _____
Դասախոսի (ների) ազգանունը, անունը _____
Ամբիոնը _____

Հ/հ	Ուսանողի ազգանունը, անունը, հայրանունը	Ստուգման գրքույկի համարը	Կրեդիտը	Գնահատման բաղադրիչները (%) և դրանց փաստացի միավորը 100 միավորային համակարգում								Բազմագործոնային համակարգով վերջնական գնահատականը	Դասախոսի (ների) ստորագրությունը
				հանձնումներ	դասընթացի աշխատանք	I-ին միջանկյալ քննություն	II-րդ միջանկյալ քննություն	ինքնուրույն աշխատանքներ	տեսություն				
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14

- Ամփոփիչ ստուգարքին ներկայացած ուսանողների թիվը _____
- Ստուգարք չստացած ուսանողների թիվը _____
- Ստուգարքին չներկայացած ուսանողների թիվը _____
- Ստուգարքին չթույլատրված ուսանողների թիվը _____

Դեկան _____ Ամբիոնի վարիչ _____

Ծանոթություն: ա) ստուգված (40-100 միավոր) - S
բ) չստուգված (0-39 միավոր) - U

Հավելված 6

Հայաստանի պետական ագրարային համալսարան
ՈՒսանողների բացակայությունների հաշվառման
և դրանց լրացման տեղեկագիր №
Առկա, հեռակա ուսուցում (ընդգծել)
201... / 201... ուսումնական տարվա _____ կիսամյակ

Ֆակուլտետը _____
Մասնագիտությունը _____ կուրսը _____ խումբը_____
Առարկա _____ կրեդիտների թիվը _____
Դասախոսի (ների) ազգանունը, անունը _____
Ամբիոնը _____

Հ/հ	ՈՒսանողի ազգանունը, անունը, հայրանունը	1-ին ամիս			2-րդ ամիս			3-րդ ամիս			4-րդ ամիս			5-րդ ամիս			Ընդամենը կիսամյակում			Հաճախումների % -ը դասընթացի (ցիկլերի) ընթացքում
		դասախոսությամբ	որից		դասախոսությամբ	որից		դասախոսությամբ	որից		դասախոսությամբ	որից		դասախոսությամբ	որից		դասախոսությամբ	որից		
			հարգելի	փոլիցում?		հարգելի	փոլիցում?		հարգելի	փոլիցում?		հարգելի	փոլիցում?		հարգելի	փոլիցում?		հարգելի	փոլիցում?	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21

Ծանոթություն: ա) բացակայությունների և լրացումների ժամաքանակները լրացվում են ըստ ամիսների՝ աճողական կարգով,
բ) դեկանատը ներկայացնում է տվյալները նույն ձևով՝ տվյալ ուսանողի վերաբերյալ կիսամյակի բոլոր առարկաների տվյալների հաշվառումով:

Դեկան _____ Ամբիոնի վարիչ _____

Ստորագրված է տպագրության 12.05.2011թ..
Թղթի չափսը 60x84 $^{1}/_{16}$, 2,5 տպ. մամուլ, 2,0 հրատ. մամուլ
Պատվեր 115: Տպաքանակ 700:

ՀՊԱՀ-ի տպարան, Տերյան 74